«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Գործնական աշխատանքների իրականացումը առարկայի դասավանդման ընթացքում

Առարկան՝դասվար

Հետազոտող ուսուցիչ՝Սյուզաննա Երզնկյան

Ուսումնական հաստատություն՝Հովհաննես Թումանյանի անվան հ.2

Երևան 2023

2 Բովանդակություն

3 Գործնական աշխատանքների նպատակը

ա) Խթանել սովորողների ինքնազարգացումը

բ) Կատարել հետազոտական աշխատանք

գ) Սովորեցնել գործնականում կիրառել գիտելիքները, կարողություններն ու հմտությունները :

դ) Ձեռք բերել խմբային աշխատանքի հմտություններ

ե) Ներկայացնել (խմբային) կատարված աշխատանքի արդյունքները

6 Աշխատանքի իրականացման փուլերը.

ա) Թեմայի ընտրություն

բ) Աշխատանքային խմբի ձևավորում

գ) Հետազոտական հարցերի առաջադրում և աշխատանքի բաժանում

դ) Խմբերի ինքնուրույն աշխատանք

ե) Ստացված արդյունքների քննարկումներ

զ) Կատարված աշխատանքների արդյունքների ներկայացում

է) Ամփոփում

15 Գնահատում

ա) Ուսուցչի և աշակերտների կողմից

բ) Գնահատել ամբողջ խմբի աշխատանքը

գ) Գնահատել յուրաքանչյուր աշակերտին

16 Եզրակացություն

17 Գրականություն

Տարրական կրթության ծրագիրը նպատակաուղղված է կրթության բովանդակության սահմանման մեջ զգալի նշանկություն ունեցող ինքնուրույն գործունեության կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

Այսօր անհրաժեշտություն է առաջանում որոնելու կրթական գործընթացի կազմակերպման համապատասխան միջոցներ և ձևեր , որոնց օգնությամբ կարելի կլինի իրագործել աշակերտների ինքնուրույն ստեղծագործական աշխատանքները:

Գործնական են անվանում սովորողների կողմից կատարվող այն աշխատանքները, որոնք վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին:

Գործնական աշխատանքների արդյունքում պետք է իրականացվեն այնպիսի գործողություններ, ինչպիսիք են գիտելիքների որոնումը, դրանց ամրապնդումը, կարողությունների և հմտությունների ձևավորումը և զարգացումը, գիտելիքների ընդհանրացումը և համակարգումը:

Գործնական աշխատանքների սահմանները շատ ընդարձակ են և իրենց մեջ ներառում են աշակերտների կողմից կատարվող հետազոտական աշխատանքները և նախագծային գործունեությունը:

Սովորողների ուսումնական ձեռքբերումների գնահատման նոր համակարգի համաձայն՝ գործնական աշխատանքները նախատեսվում են և՛ միավորային , և՛ ուսուցանող գնահատումների դեպքում: Հետևաբար այս աշխատանքները ուսուցիչը կարող է օգտագործել և՛ ստուգման, և՛ ուսուցանող նպատակով :

Գործնական աշխատանքը մի կողմից ուսումնական առաջադրանք է , այսինքն՝ այն, ինչ պետք է անի աշակերտը, մյուս կողմից այդ առաջադրանքի կատարման ընթացքում համապատասխան գործունեություն՝ հիշողություն, մտածողություն , ստեղծագործական երևակայության դրսևորման ձև,որն արդյունքում աշակերտին տալիս է միանգամայն նոր, նախկինում նրան անծանոթ գիտելիքներ կամ էլ արդեն ունեցած գիտելիքների խորացում:

Տարրական դասարաններում ներկայացվող չափորոշչային և ծրագրային պահանջների համաձայն մայրենիից նախատեսվում են տարբեր բնույթի և տիպի գործնական աշխատանքներ.

1. Պատմության գծապատկերի կազմում նախադասությունների համար գունային բաժանումներով:
2. Վանկերի, բառերի գծապատկերներ:
3. Դասանյութի մասերին համապատասխան բովանդակային կառուցվածքի գծակարգ:
4. Տեքստի սխալների ուղղում, խառնված հերթականության շտկում:
5. Գործնական գրություններ՝ նամակ, հասցե,հայտարարություն, գովազդային վահանակ, դասարանական թերթ ստեղծելու և ձևավորելու աշխատանքներ:
6. Հեքիաթների հորինում, նկարազարդում և այլն :

Դպրոցական ուսունմառության հենց առաջին օրերից սկսած կարևոր է ,որ երեխան դառնա ուսումնական գործընթացի ակտիվ մասնակիցը: Երեխային գործնական աշխատանք կատարելուն նախապատրաստելը, նրան համապատասխան կարողություններ և հմտություններ ուսուցանելը դասավանդող ուսուցչի կարևորագույն խնդիրն է: Ուսուցչի աշխատանքը պետք է նպատակաուղղված լինի սովորողների գործնական կարողությունների զարգացմանը՝ որպես ճանաչողական հետաքրքրության զարգացման և ուսումնական գործունեության նկատմամբ դրդապատճառների ստեղծման միջոց:

Այդ նպատակաուղղված աշխատանքների ընթացքում լուծվում են հետևյալ խնդիրները.

1. Ճանաչողական գործընթացների զարգացում (երևակայություն, ընկալում, հիշողություն)

2.Մտածական գործընթացների զարգացում (համեմատում, վերլուծություն, գլխավորի առանձնացում ,նյութի ամփոփում , հակասություններ տեսնելու կարողություններ և այլն)

3.Հետազոտական կարողությունների ձևավորում և զարգացում, տեսնել անսովորը, ձևակերպել խնդիրները, ապացուցել գաղափարը , ձևավորել հետազոտական աշխատանքների արդյունքները:

4. Ինքնակրթության կարողությունների ձևավորում

5.Բանավոր և գրավոր խոսքի զարգացում

6. Համագործակցային և հաղորդակցական կարողությունների զարգացում:

Գործնական կարողությունների զարգացման առաջին փուլը սկսվում է առաջին դասարանից: Այս աշխատանքը առաջին դասարանում կրում է սոսկ ուսուցանող բնույթ: Այս փուլում աշխատանքը հիմնականում նպատակաուղղված է երևակայության , ստեղծագործական մտածողության, դիտարկման, հարցեր տալու կարողությունների զարգացմանը:

Այդ նպատակով կան մի շարք վարժություններ, որոնք հնարավորություն են ընձեռնում արդյունավետ կատարել գործնական աշխատանքները:

Օրինակ՝

ա) շարունակիր անավարտ պատմությունը

բ) հորինիր պատմվածք

գ) նկարագրիր քո երևակայական աշխարհը

և այլն:

Պետք է հետևել , որ երեխաները ճիշտ ձևակերպեն իրենց մտքերը: Շատ կարևոր կարողություն է հարցեր առաջ քաշելու կարողությունը:

Առաջին դասարանից սկսած սովորողներին վարժեցնել հետազոտական գործունեության հետևյալ ձևերին.

1. Մտածել ինքնուրույն
2. Հարցնել մեկ ուրիշից
3. Կարդալ գրքերում
4. Դիտել հեռուստացույց
5. Տեղեկություններ ստանալ համացանցից
6. Կատարել դիտարկումներ
7. Անցկացնել փորձեր

Գործնական աշխատանքը ենթադրում է այնպիսի աշխատանք, որի կատարման ընթացքում աշակերտը հայտնվում է իր համար ոչ սովորական իրավիճակում, որտեղ անհրաժեշտ է հնարամտություն, ստեղծագործական մոտեցում, որպեսզի կարողանա լուծել իր առջև դրված խնդիրը: Գործնական աշխատանքը պետք է կազմված լինի այնպիսի առաջադրանքներից, որոնք հնարավոր չէ կատարել առանց գործնական նյութի լավ իմացության: Այսինքն՝ գործնական աշխատանքը ուսումնական գործընթացում յուրացված գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառումն է:

Գործնական աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնները.

1. Ցանկացած աշխատանք պետք է ունենա կոնկրետ նպատակ:

2. Աշխատանքի ընթացքում աշակերտները պետք է կարողանան կիրառել մինչ այդ իրենց յուրացրած գիտելիքներն ու կարողությունները:

3. Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա կատարման ընթացքը և պետք է յուրացնի ինքնուրույն գործելու հնարները:

4. Աշխատանքը պետք է համապատասխանի սովորողների կարողություններին:

5. Աշխատանքի ընթացքում ստացված արդյունքները պետք է կիրառվեն ուսումնական գործընթացում:

6. Աշխատանքի բովանդակությունը պետք է հետաքրքրություն առաջացնի:

Կրտսեր դպրոցականներին մայրենիից տրվող գործնական աշխատանքները կարելի է անվանել ստեղծագործակա - հետազոտական աշխատանքներ:

Հետազոտական աշխատանքը անձի ակտիվ ստեղծագործական վերաբերմունքն է շրջապատող աշխարհի նկատմամբ: Հետազոտական գործունեության ընթացքում երեխան սովորում է դիտարկել , խորհել, համեմատել, պատասխանել հարցերին, կատարել եզրահանգումներ և այլն:

Հետազոտական գործունեության կազմակերպման ընթացքում երեխաները պետք է կիրառեն տարբեր մեթոդներ և հնարներ, ճիշտ համակցեն դրանք միմյանց հետ: Մեթոդների ընտրությունը որոշվում է երեխաների տարիքային առանձնահատկությամբ և այն կրթադաստիարակչական նպատակներով, որոնք առաջադրել է ուսուցիչը:

Հետազոտական գործունեության արդյունքը ոչ միայն այն գիտելիքներն են, որոնք նա ձեռք է բերում, այլև ճանաչողական գործունեություն ծավալելու միջոցները, որոնք նպաստում են անձի մտավոր զարգացմանը:

Տարրական դասարաններում համարյա բոլոր հետազոտական աշխատանքները կրում են կոլեկտիվ բնույթ: Թեմատիկան որոշում է ուսուցիչը, բայց յուրաքանչյուր աշակերտ իր ավանդն է ներդնում ընդհանուր գործի մեջ: Այն սովորեցնում է երեխային աշխատել կոլեկտիվում, ընդհանուր հետաքրքրությունները վեր դասել սեփականից:

Արդեն չորրորդ դասարանում շատ աշակերտներ կարող են ինքնուրույն ընտրել հետազոտության թեման: Ուսուցիչը պետք է միայն ուղղորդի նրանց ճիշտ ընտրության հարցում՝ առաջարկելով մտածել որոշ հարցերի պատասխանների շուրջ:

Հետազոտական աշխատանքները դասակարգվում են.

ա) ըստ աշակերտների քանակի՝ անհատական , զույգերով, խմբային

բ) ըստ անցկացման վայրի՝ դասարանական և արտադասարանական

գ) ըստ ժամանակի՝ երկարատև , կարճատև

դ) ըստ թեմայի՝ առարկայական և ազատ

ե) ըստ խնդիրների՝ ուսումնական նյութի խորացում և հարցեր, որոնք ծրագրային նյութ չեն:

Կրտսեր դպրոցականների ստեղծագործական մտածողության և հետազոտական կարողությունների ձևավորման ու զարգացման նպատակով գործնական աշխատանքների գործընթացում կիրառում են հիմնականում նախագծի մեթոդը: Այս մեթոդի էությունն այն է, որ երեխաները, իրենց հետաքրքրությունից ելնելով, ուսուցչի հետ միասին իրականացնում են նախագիծ՝ լուծելով որևէ հետազոտական խնդիր:

Նախագծային և հետազոտական գործունեությունները սկզբունքորեն տարբեր են իրենց ուղղություններով և բնույթով: Քանի որ հետազոտությունը ճշմարտության որոնումն է, իսկ նախագիծը կոնկրետ որևէ պարզորոշ խնդրի լուծումը:

Նախագծի մեթոդի հիմքում ընկած է սովորողների տրամաբանական- ճանաչողական, նոր գիտելիքների ինքնուրուն յուրացման, տեղեկատվական դաշտում կողմնորոշվելու, քննադատական և ստեղծագործական մտածողություն դրսևորելու, խնդիրներ տեսնելու, ձևակերպելու և լուծելու կարողությունների զարգացումը:

Այսօր այս մեթոդը դարձել է ուսուցման գործընթացի անխախտ մասը: Այն լավ մտածված ուսուցման մեթոդների, ձևերի, հնարների հանակցումն է: Նախագծի մեթոդի օգնությամբ հնարավոր է կատարել տարբեր բնույթի գործնական աշխատանքներ և ուսուցանել.

ա) ինչպե՞ս բացահայտել խնդիրները

բ) ինչպե՞ս անցկացնել դրանց վերլուծությունը

գ) որոնել դրանց լուծման ուղիները

դ) ստացված տեղեկատվությունը կիրառել առաջադրված խնդիրների լուծման նպատակով և այլն:

Նախագծերի շուրջ աշխատանքը բավականին բարդ է, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է տարրական դասարանների աշակերտներին դրան նախապատրաստել աստիճանաբար: Այս դասարանների աշակերտների հետ հաճախ է կիրառվում խաղ-հետազոտությունը , որը բաղկացած է երկու փուլից՝ մարզողական պարապմունքներ և ինքնուրույն հետազոտություն: Դասը, որն անցկացվում է նախագծի մեթոդով, կարող է լինել ինչպես նոր նյութի յուրացման, այնպես էլ ուսումնական խնդիրների լուծման կարողությունների և հմտությունների ամրապնդման դաս:

Գործնական աշխատանքների վերաբերյալ վերը նշված տեսական գիտելիքները հնարավորություն են տալիս ուսուցչին ինքնուրույն ստեղծագործելու և իր իսկ կազմած մեթոդներով իրականացնելու այդ աշխատանքները:

Ներկայացնում ենք գործնական աշխատանքների կազմակերպման նմուշներ մեր աշխատանքային փորձից: Գործնական աշխատանքները սկսում ենք առաջին դասարանից խաղերի միջոցով : Խաղերը շատ հոգեհարազատ են վեց տարեկան երեխաներին և երեխաները խաղերի միջոցով ներգրավվում են ուսումնական գործընթացին, այն դարձնելով մատչելի և արդյունավետ:

Ներկայացնում ենք մեր կողմից կիրառած մի քանի խաղեր , որոնք երեխաների մոտ զարգացնում են ուշադրություն, հիշողություն, խոսք, բառապաշար և այլն:

Ի՞նչ է փոխվել

Անհրաժեշտ պարագաներ: Մեծ և փոքր խնձորների, տերևների, ծառերի ցուցանակներ:

Խաղի էությունը: Տարբերակ 1. Ընտրված տեղում ուսուցիչը դնում է կարմիր գույնի մեծ խնձոր, կանաչ գույնի փոքր խնձոր, դեղին գույնի մեծ տերև և կանաչ փոքր տերև:

Երեխաները պետք է փակեն աչքերը, ուսուցիչը արագ վերցնում է փոքր կանաչ խնձորը:

Ի՞նչ է փոխվել:

Երեխան պետք է տա լրիվ պատասխան. «Չկա կանաչ փոքր խնձորը»:

Այս խաղում կատարելագործվում է երեխայի տեսողական հիշողությունը, հիշողությունը: Երեխան սովորում է տալ լրիվ պատասխաններ, զարգանում է խոսքը, հարստանում է բառապաշարը:

Այս խաղերը պետք է սկսել քիչ թվով առարկաներից (օրինակ երկուսից): Խաղը դժվարացնելու համար պետք է ավելացնել առարկաների քանակը: Բոլոր երեխաներին խաղում ընդգրկելու համար պետք է հաշվի առնել յուրաքանչյուրի մտավոր կարողությունները: Ավելի թույլ երեխաներին պետք է տալ ավելի հեշտ հանձնարարություններ: Օրինակ՝ 2 կամ 3 առարկայից վերցնել առավել աչքի ընկնողը (կամ նրա նկարը):

Այս խաղը կարելի է անցկացնել տարբեր երկարության, լայնության, բարձրության առարկաներով (երկար և կարճ ժապավեն , լայն կամ նեղ գոտի և այլն):

Փորձարարական սեղանին ուսուցիչը դասավորում է առարկաներ . 2ժապավեն միևնույն լայնության, բայց մեկը երկար, մյուսը՝ կարճ: 2 թերթ թուղթ. Մեկը՝ լայն, մյուսը՝ նեղ, բայց միևնույն երկարության:

Տարբերակ 2

Երեխաները նայում են առարկաները, համեմատում են մեծությամբ, այնուհետև ուսուցիչը հանձնարարում է երեխաներից մեկին մեջքով կանգնել սեղանին և վերցնում է առարկաներից մեկը: Թեքվելով երեխաները պետք է պատասխանեն, թե ո՞ր առարկան են վերցրել: Ինչպիսի՞ մեծություն ուներ:

Տարբերակ 3

Աչքերը փակում են բոլոր երեխաները, իսկ մեկը այդ ժամանակ վերցնում է ինչ-որ առարկա, իսկ հետո հարցնում է ի՞նչ է փոխվել: Առարկաների քանակը տարբեր մեծությամբ կարելի է անընդհատ ավելացնել:

Ո՞վ է թաքնված պարկում

Անհրաժեշտ պարագաներ: Պարկի մեջ լցնել մեծ և փոքր գնդակներ, խորանարդիկներ, կոճակներ, մետաղադրամներ և այլն:

Նույն առարկաներից մեկ օրինակ դասավորել սեղանին:

Խաղի էությունը: Երեխային հանձնարարված է պարկից հանել մեծ խորանարդ: Նա առանց պարկի մեջ նայելու՝ շոշափելով փնտրում է պարկում և գտնում է այն: Այնուհետև այդ խորանարդի մեծությունը համեմատում է սեղանին դրված խորանարդի մեծության հետ (սեղանին դրված առարկաները նախատեսված են հանձնարարաության առավել ճիշտ կատարման համար): Խաղը պետք է անցկացնել պարբերաբար: Այն կարելի է կապել երկրաչափական մարմինների հետ:

Առաջին դասարան

Առարկան- Մայրենի

Թեման- Նոր հնչյուն-տառի ուսուցումը

Նպատակը- ա) ամրապնդել սովորած տառերը

բ) խմբերի բաժանման կարողությունների և հմտությունների ձևավորում

գ) ինքնուրույն մտածելու և աշխատելու կարողությունների ձևավորում

դ) ունեցած գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների ձևավորում

Աշխատանքի կազմակերպումը

Առաջին քայլ- Դասարանը բաժանել խմբերի (երեք խումբ)

Երկրորդ քայլ - Յուրաքանչյուր խմբին տալ մեկական ծրար, որոնց պարունակությունը նույնն է. աշակերտի կողմից արդեն յուրացված տառերը և այն հնչյուն-տառը , որը պետք է նոր ուսուցանվի:

Երրորդ քայլ – ՈՒսուցիչը բացատրում է խաղի կանոնները (այսպիսի աշխատանքները սովորողները պետք է ընկալեն որպես խաղ)

ա) Խմբերից պահանջվում է բացել ծրարները և այնտեղից առանձնացնել և ցուցադրել իրենց համար անծանոթ տառը:

բ) Այնուհետև ուսուցիչը խմբի յուրաքանչյուր անդամին տալիս է առաջադրանք՝ հաշվի առնելով նրանց կարողությունները.

Օրինակ ՝ Առաջին աշակերտ- ցույց տուր և ասա քեզ ծանոթ բոլոր տառերը, որ կան ձեր ծրարում:

Երկրորդ աշակերտ- այդ տառերից կազմիր մեկ միավանկ բառ:

Երրորդ աշակերտ - կազմիր ընկերոջդ ստացած բառի գծապատկերը:

Չորրորդ աշակերտ – ասա ձեր ծրարում եղած բոլոր բաղաձայն կամ ձայնավոր հնչյունները :

Ուսուցիչը նաև հավելում է, որ խմբի անդամները կարող են և պարտավոր են իրար օգնել, որ մեկի հաջողությունը բոլորինն է:

Երբ բոլոր խմբերը ավարտվում են իրենց աշխատանքը և ուսուցիչը լսում է բոլորին, արդեն անդրադառնում են այն «հայտնաբերված» հնչյուն- տառին, որը առանձնացրել էին խմբերը: Դասի մնացած ժամանակահատվածը ուսուցիչը տրամադրում է նոր հնչյուն-տառի ուսուցմանը՝ աշխատելով նաև դասագրքի հետ:

Եվ այսպես ողջ գրաճանաչության շրջանում յուրաքանչյուր հնչյուն –տառ ուսուցանվում է խմբային աշխատանքների միջոցով և ամեն հինգերորդ տառից հետո փոխվում է «խաղի» կանոնները՝ առաջադրանքներին ավելացնելով նորը:

Ուսուցիչը կարող է պարբերաբար փոխել նաև խմբերի բաժանման ձևերն ու եղանակները:

Առաջին դասարանում այս տիպի գործնական աշխատանքները երկարատև են և սկսվում են գրաճանաչության հենց սկզբից (հինգերորդ տառից սկսած) և ավարտվում են ուսումնական գործընթացի հետ միաժամանակ: Արդյունքները ամփոփվում են տարեվերջում և գնահատվում ուսուցիչների, ծնողների, ինչպես նաև իրենց՝ աշակերտների կողմից:

Մեր կողմից մշակված տառուսուցման այս մեթոդը շատ արդյունավետ էր և նույնիսկ գերազանցեց մեր սպասելիքները

1. Առաջին դասարանը ավարտող յուրաքանչյուր աշակերտ հմտորեն տիրապետում է խմբերի բաժանման ձևերին ու հնարներին:

2. Անկաշկանդ աշխատում է կոլեկտիվում (խմբում) և քաջ գիտակցում է իր դերը այդ խմբում:
3. Ինքնուրույն մտածել և հարցեր տալ
4. Կատարել դիտարկումներ
5. Համագործակցել ընկերոջ հետ և այլն:

Արդեն երկրորդ դասարանում աշակերտները զինված են որոշակի կարողություններով և հմտություններով, որի հիման վրա էլ կշարունակեն հետագա աշխատանքները (արագ բաժանվել խմբերի , լուռ աշխատել խմբում և այլ հմտություններ, որոնցից էլ կախված է գործնական աշխատանքների արդյունավետությունն ու որակը:

Գործնական աշխատանք- չորրորդ դասարանում

Առարկան- Մայրենի

Թեման- Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքները (ամփոփման դաս)

Նպատակը- ա) կզարգանան աշակերտների հաղորդում վարելու և պատրաստելու կարողությունները , ընթերցածից տեղեկություն քաղելու կարողությունը

բ) կձևավորվեն ցանկացած աշխատանք կատարելու նախագծման և քայլաշարի մշակման կարողությունները

գ) կդրսևորվեն սեր ու հարգանք հայ մեծերի ու նրանց թողած անգնահատելի ժառանգության նկատմանբ:

Ընթացքը

1. Թեմայի ամփոփումից մեկ շաբաթ առաջ աշակերտները բաժանվում են խմբերի
2. Յուրաքանչյուր խումբ վիճակահանության միջոցով ընտրում է իր թեման :

3. Խմբում յուրաքանչյուր աշակերտի հանձնարարության բաշխում և պլանավորում է կատարվում:
4. Յուրաքաչյուր խմբին հանձնարարվում է իր թեմայի վերաբերյալ պաստառ ձևավորել:

Աշխատանքի կատարման համար տրամադրվում է մեկ շաբաթ:

Դասարանը բաժանվում է չորս խմբի յուրաքանչյուր խմբում հինգ աշակերտ :

Խմբերն ունեն իրենց թեմաները՝

1. Հովհաննես Թումանյան – Թումանյանականներ
2. Արամ Խաչատրյան – Խաչատրյանականներ
3. Մարտիրոս Սարյան – Սարյանականներ
4. Կոմիտաս- Կոմիտասականներ

Մեկ շաբաթվա ընթացքում խմբերը հավաքում են լրացուցիչ տեղեկություններ հայ մեծերի մասին : Աշակերտները հավաքում, մշակում, համակարգում են տեղեկատվությունները և նախօրեին՝ այսինքն շնորհանդեսից մեկ օր առաջ քննարկում են վերջնական արդյունքները :

Գործնական աշխատանքի շնորհանդեսը կազմակերպվում է Ազատության հրապարակում՝ Հ. Թումանյանի, Ա. Խաչատրյանի, այնուհետև Մ. Սարյանի և Կոմիտասի արձանների մոտ:

Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր թեման, իսկ արդյունքները քննարկվում և գնահատվում են հաջորդ օրը: Կազմակերպչական աշխատանքներին և գնահատմանը կարող են մասնակցել նաև ծնողները: Խմբերի պատրաստած պաստառները դպրոցում փակցվում է նախասրահի «Ստեղծագործում են աշակերտները» անկյունում :

Խմբերը շատ գեղեցիկ են ներկայացնում իրենց աշխատանքները և այնքան հետաքրքիր, որ պատահական անցորդներն էլ ակամայից մասնակից են դառնում նրանց ելույթներին:

Եզրակացություն

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գործնական աշխատանքների սահմանները շատ ընդարձակ են և իրենց մեջ ներառում են և զարգացնում այնպիսի գործողություններ, ինչպիսիք են գիտելիքների որոնումը, դրանց իմաստավորումը, ամրապնդումը, կարողությունների և հմտությունների ձևավորումը:

Գործնական աշխատանքների ճիշտ կազմակերպումը և այդ աշխատանքների ընթացքում ուսուցման բազմազան մեթոդների կիրառումը հնարավորություն է ընձեռնում ապահովելու դասավանդման բարձր որակ: Եվ սովորողները ոչ միայն կստանան շատ գիտելիքներ, այլև կսովորեն դրանք ձեռք բերել ինքնուրույն և կիրառել գործնականում:

Մանկավարժական գիտությամբ և պրակտիկայով հաստատված է, որ եթե երեխային ստեղծագործական գործունեության չվարժեցնեն փոքր տարիքից, ապա նա կունենա կորուստներ, որոնք հետագայում դժվար կլինի շտկել:

Միշտ պետք է առաջնորդվել՝

Լսեցի-մոռացա

Տեսա-հիշեցի

Կատարեցի-հասկացա

Օգտագործված գրականության ցանկ

1. Կարինե Թորոսյան, Կարինե Չիբուխչյան «Գործնական աշխատանքներ մայրենիից» տարրական դասարաններ –Երևան- 2012. «Զանգակ» հրատարակչություն.
2. Կ. Թորոսյան, Վ. Սարգսյան և ուրիշներ, «Մայրենի 4», «Մանմար», 2010թ.
3. Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, 2006, 3-4 համարներ
4. Սեփական աշխատանքային փորձից